

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՑԱԾԻ ԼԱՐՄԱՆ ԷԼԵԿՏՐԱՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի N 150-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գլխավոր տեղեկություն

Համար	N 285-Ն
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Հիմնական ակտ (01.07.2016-14.01.2022)
Կարգավիճակ	Չի գործում
Սկզբնաղբյուր	ՀՀՊՏ 2015.04.01/18(1107) Հոդ.224
Ընդունող մարմին	ՀՀ կառավարություն
Ընդունման ամսաթիվ	19.03.2015
Ստորագրող մարմին	ՀՀ վարչապետ
Ստորագրման ամսաթիվ	27.03.2015
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	01.07.2016
Ուժը կորցնելու ամսաթիվ	14.01.2022

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 մարտի 2015 թվականի N 285-Ն

ՑԱԾԻ ԼԱՐՄԱՆ ԷԼԵԿՏՐԱՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի N 150-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐԹՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել ցածր լարման էլեկտրասարքավորումների անվտանգության տեխնիկական կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 3-ի «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 150-Ն որոշումը:
3. Հայաստանի Հանրապետության Էլեկտրաէներգետիկայի նախարարին՝ ապահովել սույն որոշման պաշտոնական հրապարակմանը հաջորդող երկամսյա ժամկետում սույն որոշման 1-ին կետով հաստատված տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարումն ապահովող և կամավոր սկզբունքով կիրառվող ազգային ստանդարտների ցանկի հրապարակումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հուլիսի 1-ից:

Հայաստանի Հանրապետության վարչապետ

Հ. Աբրահամյան

2015 թ. մարտի 27
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
մարտի 19-ի N 285-Ն որոշման

Տ Ե Մ Ն Ի Կ Ա Կ Ա Ն Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ՑԱԾԻ ԼԱՐՄԱՆ ԷԼԵԿՏՐԱՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ

I. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Ցածր լարման էլեկտրասարքավորումների անվտանգության տեխնիկական կանոնակարգի (այսուհետ՝ տեխնիկական կանոնակարգ) գործողությունը տարածվում է շրջանառության դուրս բերված փոփոխական հոսանքի՝ 50-1000 Վ և հաստատուն հոսանքի՝ 75-1500 Վ էլեկտրական լարմամբ կիրառման նոր էլեկտրասարքավորումների (էլեկտրատեխնիկական կամ էլեկտրոնային սարքավորումներ, ինչպես նաև տարբեր նշանակության դրանց համակցություններ) վրա, բացառությամբ սույն տեխնիկական կանոնակարգի 3-րդ կետով սահմանված արտադրատեսակների:

2. Սույն տեխնիկական կանոնակարգով սահմանվում են ներկայացված ցածր լարման սարքավորումների անվտանգության ընդհանուր պահանջները, դրանց մակնշման և շահագործման փաստաթղթերին ներկայացվող պահանջները, անվտանգության ապահովման պայմանները, ինչպես նաև համապատասխանության գնահատման ընթացակարգերը:

3. Սույն տեխնիկական կանոնակարգը չի տարածվում հետևյալ արտադրատեսակների վրա՝

- 1) պայթյունավտանգ միջավայրում օգտագործման համար նախատեսված էլեկտրասարքավորումներ.
 - 2) ռադիոլոգիական և բժշկական նշանակության սարքավորումներ.
 - 3) վերելակների և բեռամբարձիչների համար նախատեսված էլեկտրասարքավորումներ (բացառությամբ էլեկտրական մեքենաների).
 - 4) էլեկտրական հաշվիչներ (չափման միջոցներ).
 - 5) կենցաղային նշանակության խրոցակային անջատիչներ և ելքային վարդակներ.
 - 6) էլեկտրական ցանկապատերի կարգավորման սարքեր.
 - 7) ռադիոէլեկտրական խանգարումների սարքեր.
 - 8) նավերի, օդանավերի կամ երկաթուղու համար նախատեսված՝ անվտանգության դրույթներին համապատասխանող հատուկ սարքավորումներ:
4. Սույն տեխնիկական կանոնակարգով ռադիոկային և հեռահաղորդակցության սարքավորումներին ներկայացվող պահանջները չեն ընդգրկում Հայաստանի Հանրապետության կապի միասնական համակարգի գործառնության ապահովման և ռադիոհաճախականությունների սպեկտրի օգտագործման հետ կապված պահանջները: Այդ

պահանջները սահմանվում են այլ իրավական ակտերով:

5. Սույն տեխնիկական կանոնակարգի արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (ԱՏԳ ԱԱ) ծածկագրերին համապատասխան էլեկտրասարքավորումները, ներկայացված սույն տեխնիկական կանոնակարգի աղյուսակում, ենթակա են համապատասխանության գնահատման:

II. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6. Սույն տեխնիկական կանոնակարգում կիրառվում են հետևյալ հասկացությունները՝

1) էլեկտրասարքավորում էլեկտրաէներգիայի արտադրման, կերպափոխման, հաղորդման, բաշխման, հսկման և սպառման, ինչպես նաև այլ տեսակի էներգիայի փոխակերպման համար նախատեսված մեքենաների, ապարատների, կայանքների, գծերի, սարքերի և օժանդակ սարքավորումների համախումբ, որը նախատեսված է փոփոխական հոսանքի՝ 50-1000 Վ և հաստատուն հոսանքի՝ 75-1500 Վ էլեկտրական լարման կիրառման համար:

2) բաղկացուցիչ մաս՝ էլեկտրասարքավորման անվտանգ գործառնություն ապահովելու համար նախատեսված ցանկացած անհրաժեշտ արտադրատեսակ՝ առանց ինքնագործառնության:

3) կիրառում ըստ նշանակության՝ էլեկտրասարքավորման կիրառում՝ արտադրողի կողմից տրամադրված տեղեկատվությանը համապատասխան, որն անհրաժեշտ է դրա անվտանգ գործառնության ապահովելու համար:

III. ՇՈՒԿԱ ՄՈՒՏԵ ԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

7. Հայաստանի Հանրապետության տարածքում սույն տեխնիկական կանոնակարգի աղյուսակում տրված էլեկտրասարքավորումների շրջանառության դուրս բերումը, այդ թվում՝ իրացումն առանց համապատասխանության գնահատման՝ արգելվում է:

8. Արտադրողը կամ Հայաստանի Հանրապետությունում նրա լիազոր ներկայացուցիչը պետք է կիրառի անհրաժեշտ միջոցներ, որպեսզի երաշխավորի, որ շրջանառության մեջ դրվող էլեկտրասարքավորումներն անվտանգության ապահովման հարցերով արտադրված են սույն տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին համապատասխան և դրանք մարդկանց ու կենդանիների կյանքի և առողջության, պետական գույքի, շրջակա միջավայրի համար վտանգի աղբյուր չեն, ինչպես նաև չեն պարունակում էլեկտրասարքավորումների նշանակության ու անվտանգության վերաբերյալ սպառողներին թուրիմացության մեջ գցող գործոններ:

9. Սույն տեխնիկական կանոնակարգի աղյուսակում նշված էլեկտրասարքավորումները Հայաստանի Հանրապետության տարածքում՝ մինչև դրանց շրջանառության դուրս բերումը, այդ թվում՝ իրացումը, պետք է դրոշմված լինեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 14-ի N 337-Ն որոշմամբ հաստատված համապատասխանության ազգային «ՀՏԿ» նշանով, որը հավաստում է էլեկտրասարքավորման համապատասխանությունը սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին՝ ներառյալ սույն տեխնիկական կանոնակարգի VII գլխում նկարագրված համապատասխանության գնահատման ընթացակարգին:

10. էլեկտրասարքավորումները պետք է ուղեկցվեն համապատասխանության հայտարարագրով և համապատասխանության գնահատման ազգային նշանով:

IV. ԷԼԵԿՏՐԱՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԱՀԱՆՁՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՐԸ

11. Սույն տեխնիկական կանոնակարգի 1-ին կետով նախատեսված էլեկտրասարքավորումներն ըստ նշանակության արտադրելու, կիրառելու, մոնտաժելու, շահագործելու, պահելու, փոխադրելու և տեխնիկական սպասարկման ժամանակ պետք է ապահովվեն՝

1) էլեկտրական հոսանքի ուղղակի կամ անուղղակի ազդեցությունից պաշտպանության անհրաժեշտ մակարդակ:

2) ջերմաստիճանի բարձրացման, աղեղային պարպման կամ ճառագայթման ազդեցությունից, որոնք կարող են բերել վտանգի առաջացման, անթույլատրելի ռիսկի բացառում:

3) էլեկտրասարքավորումների պտտիվող և անշարժ մասերի վնասվածքներից պաշտպանության անհրաժեշտ մակարդակ:

4) էլեկտրասարքավորումների օգտագործման ժամանակ առաջացած վտանգներից, այդ թվում՝ ոչ էլեկտրական, ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական գործոններից, պաշտպանության անհրաժեշտ մակարդակ:

5) մեկուսացման պաշտպանության անհրաժեշտ մակարդակ:

6) մեխանիկական և փոխարկման մաշվածքակայունության անհրաժեշտ մակարդակ:

7) արտաքին գործոնների ներգործությունների նկատմամբ, այդ թվում՝ ոչ մեխանիկական բնույթի, արտաքին միջավայրին համապատասխան կլիմայական պայմանների դեպքում կայունության անհրաժեշտ մակարդակ:

8) գերբեռնվածության, վթարային ռեժիմների և խափանման ժամանակ առաջացած արտաքին և ներքին գործոնների ներգործության ազդեցության անթույլատրելի ռիսկի

բացառում.

9) անչատման և (կամ) մոնտաժման ժամանակ անթույլատրելի ռիսկի բացառում:

12. Սույն տեխնիկական կանոնակարգի 1-ին կետով նախատեսված էլեկտրասարքավորումների հիմնական բնութագրերը, որոնց ճանաչումը և պահպանումն ապահովում են էլեկտրական սարքավորումների անվտանգ և նպատակային օգտագործումը, պետք է մակնշված լինեն համապատասխան սարքավորման վրա կամ, եթե դա հնարավոր չէ, ապա սարքավորումն ուղեկցող փաստաթղթերում:

13. էլեկտրասարքավորման ֆիրմային անվանումը կամ ապրանքային նշանը պետք է հստակ արտատպված լինի էլեկտրասարքավորման վրա, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա՝ փաթեթավորման վրա:

14. էլեկտրասարքավորումն իր բաղկացուցիչ մասերի հետ պետք է պատրաստվի այնպես, որ հնարավոր լինի ապահովել դրանց անվտանգ և պատշաճ մոնտաժումն ու միացումը:

15. էլեկտրասարքավորումը պետք է նախագծվի և արտադրվի այնպես, որ ապահովվի պաշտպանությունը սույն տեխնիկական կանոնակարգի 11-րդ և 17-րդ կետերում նկարագրված վտանգներից՝ ապահովելով սարքավորման նպատակային օգտագործումը և համապատասխան պահպանումը:

16. էլեկտրասարքավորումները պետք է նախագծված և արտադրված լինեն այնպես, որ դրանք աշխատանքային նորմալ և վթարային պայմաններում հրդեհի առաջացման աղբյուր չհանդիսանան:

17. էլեկտրասարքավորումը պետք է նախագծված և արտադրված լինի այնպես, որպեսզի՝

1) հնարավոր լինի ապահովել մարդկանց և տնային կենդանիների պատշաճ պաշտպանությունը ֆիզիկական կամ այլ վնասվածքներից, որոնք կարող են ի հայտ գալ այդ սարքավորումների հետ ուղղակի և անուղղակի շփումից.

2) չառաջանան վտանգ ներկայացնող ջերմաստիճաններ, աղեղներ և ճառագայթներ.

3) հնարավոր լինի ապահովել մարդկանց, տնային կենդանիների և գույքի պաշտպանությունն էլեկտրական սարքավորումներից առաջացող ոչ էլեկտրական բնույթի վտանգից, որը բացահայտվում է սարքի շահագործման ժամանակ.

4) հնարավոր լինի կանխատեսելի պայմաններում պատշաճ կերպով ապահովել մեկուսացումը:

V. ԷԼԵԿՏՐԱՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱԿՆՇՄԱՆԸ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴԱՎՆՁՆԵՐԸ

18. էլեկտրասարքավորման անվանումը և (կամ) նշագիրը (տիպը, մակնիշը, մոդելը), անվտանգության վրա ազդող դրա հիմնական պարամետրերը և բնութագրերը, արտադրողի անվանումը և (կամ) նրա ապրանքային նշանը, երկրի անվանումը, որտեղ արտադրվել է էլեկտրասարքավորումը պետք է նշված լինեն էլեկտրասարքավորման վրա և դրան կցվող շահագործման փաստաթղթերում: Այդ դեպքում արտադրողի անվանումը և (կամ) նրա ապրանքային նշանը, էլեկտրասարքավորման անվանումը և (կամ) նշագիրը (տիպը, մակնիշը, մոդելը) պետք է նշված լինեն նաև փաթեթավորման վրա:

19. Եթե սույն տեխնիկական կանոնակարգի 18-րդ կետի տվյալները հնարավոր չէ նշել էլեկտրասարքավորման վրա, ապա դրանք կարող են ներկայացվել միայն դրանց կցվող տվյալ սարքավորման շահագործման փաստաթղթերում: Այդ դեպքում արտադրողի անվանումը և (կամ) դրա ապրանքային նշանը, էլեկտրասարքավորման անվանումը և (կամ) նշագիրը (տիպը, մակնիշը, մոդելը) պետք է նշված լինեն նաև փաթեթավորման վրա:

20. էլեկտրասարքավորումների վրա մակնշվածքը պետք է լինի ընթեռնելի, չջնջվող (երկարաժամկետ) և զետեղված լինի օգտագործողի համար մատչելի տեղում:

21. էլեկտրասարքավորումների շահագործման փաստաթղթերում տրվող տեղեկատվությունը պետք է լինի միանշանակ, ստույգ և ամբողջական ու պարունակի հետևյալ տվյալները՝

1) սույն տեխնիկական կանոնակարգի 18-րդ կետում թվարկված տեղեկատվությունը.

2) էլեկտրասարքավորման հիմնական (կամ գործառնական) նշանակությունը կամ կիրառման ոլորտը.

3) բնութագրերը և պարամետրերը.

4) անվտանգ և արդյունավետ տեղադրման, շահագործման, փոխադրման, պահման, նորոգման, օգտահանման (ոչնչացման) կանոնները և պայմանները (անհրաժեշտության դեպքում).

5) էլեկտրասարքավորման անսարքության հայտնաբերման դեպքում անհրաժեշտ միջոցների կիրառման մասին տեղեկատվությունը.

6) արտադրողի, մատակարարի անվանումը, գտնվելու վայրը, դրանց հետ կապի համար տեղեկատվությունը.

7) էլեկտրասարքավորման արտադրման ամիսն ու տարին և (կամ) արտադրման տարվա նշման տեղի և որոշման միջոցի մասին տեղեկատվությունը:

22. Հայաստանի Հանրապետությունում արտադրվող կամ Հայաստանի Հանրապետություն ներմուծվող էլեկտրասարքավորումների մակնշումը և կցվող փաստաթղթերը պետք է ձևակերպված լինեն հայերենով:

VI. ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԱՎՆՁՆԵՐԻ ՀԱՄԱԴԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱԴԱՀՈՎՈՒՄԸ

23. Սույն տեխնիկական կանոնակարգին էլեկտրասարքավորումների համապատասխանությունն ապահովվում է անվտանգության պահանջների անմիջական կատարմամբ:

24. Էլեկտրասարքավորումների փորձարկման մեթոդները և չափումները սահմանվում են ստանդարտներով, որոնք ներառված են տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարումն ապահովող՝ կամավոր սկզբունքով կիրառվող և օրենսդրությամբ սահմանված կարգով հրապարակված ստանդարտների անվանացանկում:

VII. ՀԱՄԱԴԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

25. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին էլեկտրասարքավորումների համապատասխանությունը հավաստելու համար արտադրողը կամ Հայաստանի Հանրապետությունում նրա լիազոր ներկայացուցիչը պետք է ունենա Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի N 56-Ն որոշմամբ սահմանված Ա ընթացակարգով հավաստված համապատասխանության հայտարարագիր:

26. Արտադրանքի ներքին հսկողությունը համապատասխանության գնահատման ընթացակարգ է, որի միջոցով արտադրողն իրականացնում է սույն տեխնիկական կանոնակարգի 27-րդ կետով սահմանված պարտականությունները և միայն իր պատասխանատվության ներքո երաշխավորում ու հայտարարում է, որ էլեկտրասարքավորումը բավարարում է դրա նկատմամբ կիրառվող սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին:

27. Արտադրողը պետք է մշակի սույն տեխնիկական կանոնակարգի 28-րդ կետով նախատեսված տեխնիկական փաստաթղթերը և ինքը կամ Հայաստանի Հանրապետությունում իր լիազոր ներկայացուցիչը վերջին էլեկտրասարքավորման արտադրությունից հետո առնվազն 10 տարի պետք է պահպանի այդ փաստաթղթերը՝ պետական կառավարման մարմինների կողմից վերահսկողություն իրականացնելու նպատակով:

28. Տեխնիկական փաստաթղթերը՝

1) սահմանում և հնարավորության դեպքում նաև ներառում են արտադրանքի նախագծման, արտադրության և շահագործման վերաբերյալ անհրաժեշտ պահանջներ.

2) իրենց կիրառելիության սահմաններում ներառում են առնվազն հետևյալ բաղադրիչները՝

ա. արտադրանքի ընդհանուր նկարագրությունը,

բ. նախագծման և արտադրության գծագրերը, ենթահանգույցների, բաղադրիչների և շղթաների ընթացակարգերը,

գ. արտադրանքի շահագործումը (օգտագործումը), նշված գծագրերը և ընթացակարգերն ընկալելու համար անհրաժեշտ նկարագրությունները և բացատրությունները,

դ. ամբողջությամբ կամ մասնակի կիրառված փոխկապակցված ստանդարտների և (կամ) անհրաժեշտ տեխնիկական մասնագրերի ցանկը, որոնց հղումները հրապարակվել են Ստանդարտացման ազգային մարմնի կողմից: Փոխկապակցված ստանդարտների մասնակի կիրառման դեպքում տեխնիկական փաստաթղթերը պետք է ներառեն այն հատվածները, որոնք տարածվել (կիրառվել) են այդ արտադրանքի վրա (համար),

ե. եթե փոխկապակցված ստանդարտները չեն կիրառվել, ապա ներկայացվում է այն լուծումների նկարագրությունը, որոնց միջոցով ապահովվում է տեխնիկական կանոնակարգի պահանջների բավարարումը,

զ. նախագծի հաշվարկների արդյունքները, տեղեկատվություն՝ իրականացված փորձաքննությունների վերաբերյալ,

է. իրականացված փորձարկումների արձանագրությունը:

29. Արտադրողը կամ Հայաստանի Հանրապետությունում նրա լիազոր ներկայացուցիչը տեխնիկական փաստաթղթերի հետ համատեղ պետք է պահպանի նաև համապատասխանության հայտարարագրի օրինակը:

30. Արտադրողը պետք է ձեռնարկի այն բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի ապահովի արտադրվող էլեկտրասարքավորման համապատասխանությունը սույն տեխնիկական կանոնակարգով նախատեսված տեխնիկական փաստաթղթերին և սահմանված պահանջներին:

31. Արտադրողը կամ Հայաստանի Հանրապետությունում նրա լիազոր ներկայացուցիչը յուրաքանչյուր էլեկտրասարքավորում մակնշում է համապատասխանության ազգային նշանով և կազմում է համապատասխանության գրավոր հայտարարագիր:

32. Համապատասխանության ազգային նշանի մակնշումը պետք է իրականացվի Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 14-ի N 337-Ն որոշմամբ սահմանված կարգով:

33. Համապատասխանության հայտարարագիրը պետք է ընդգրկի հետևյալ տվյալները՝

1) էլեկտրասարքավորման նկարագրությունը (անվանումը, մոդելի տեսակը կամ համարը, ցանկացած հավելյալ տեղեկություն, օրինակ՝ խմբաքանակը կամ սերիական համարը, բաղադրիչ մասերի անվանումները).

2) տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ հայտարարություն, որին պետք է համապատասխանի արտադրանքը՝ ներառյալ հղումներ փոխկապակցված ազգային ստանդարտներին.

3) անհրաժեշտության դեպքում հղում այն մասնագրերին, որոնց պահանջներին հայտարարվում է համապատասխանությունը.

4) լրացուցիչ տեղեկատվություն (արտադրանքի տեսակը կամ դասը)` համաձայն տեխնիկական կանոնակարգի.

5) հայտարարագրի ձևակերպման ամսաթիվը, արտադրողի կամ լիազորված ներկայացուցչի անվանումը, հասցեն և ստորագրությունը.

6) համապատասխանության գնահատման ընթացակարգ իրականացրած համապատասխանության գնահատման նշանակված մարմնի անվանումը, գտնվելու վայրը և (անհրաժեշտության դեպքում) նշանակված մարմինների գրանցամատյանում արձանագրված նույնականացման կոդը, վստահված անձի անունը, ազգանունը և զբաղեցրած պաշտոնը, ով ունի արտադրողի կամ նրա լիազոր ներկայացուցչի պարտավորություններն ստանձնելու իրավասություն:

VIII. ՉՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ

34. Էլեկտրասարքավորումների չափումների միասնականության ապահովումը պետք է իրականացվի «Չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

IX. ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

35. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին էլեկտրասարքավորումների համապատասխանության նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացվում է «Համապատասխանության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Դ. Հարությունյան

Ա Ղ Յ Ո Ւ Ս Ա Կ

ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԱՆՎԱՆԱՑՄԱՆԿԻ (ԱՏԳ ԱԱ) ԾԱԾԿԱԳՐԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏՄԱՍԻՄԱՆ ԷԼԵԿՏՐԱՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑՄԱՆԿԻ

NN ը/կ	Ապրանքների անվանումը	ԱՏԳ ԱԱ ծածկագիրը
1	2	3
1.	I. Կենցաղային նշանակության էլեկտրական ապարատներ և սարքեր	
	1) սննդի պատրաստման և պահման ու խոհանոցային աշխատանքների համար սառնարաններ, սառնախցիկներ, սառնարան-սառնախցիկներ	8418 10 200 1 8418 10 800 1 8418 21 8418 29 000 0 8418 30 200 1 8418 30 800 1 8418 40 200 1 8418 40 800 1
	սպասք լվանալու մեքենաներ	8422 11 000 0 8516 60 101 0 8516 60 109 0
	Էլեկտրական սալօջախներ և խոհանոցի էլեկտրասալիկներ, եփելու կաթսաներ և էլեկտրասալիկների համար էլեկտրատաքացուցիչ տարրերով վահանակներ, էլեկտրապահարաններ, էլեկտրաջեռոցներ, ներսարքված վառարաններ, տապակավառարաններ, մրգերի, բանջարեղենների, հատապտուղների, սնկերի համար էլեկտրաչորանոցներ	8516 60 800 0 8516 60 900 0 8516 79 700 0 8516 10 800 0 8516 71 000 0 8516 79 700 0
	հեղուկի տաքացման համար էլեկտրասարքեր, թեյնիկներ, սրճեփներ, սրճամեքենաներ, մանկական սննդի տաքացուցիչներ, շոգեխաշիչներ, մանրեագերծիչներ	8516 50 000 0 8509 80 000 0
	միկրոալիքային վառարաններ	8516 60 700 0

թափոնահանիչներ (խոհանոցի մնացորդների մանրացման սարքեր)	8516 60 900 0 8516 72 000 0 8516 79 200 0 8516 79 700 0
Էլեկտրագրիչներ, հպումային գրիչներ, անոգրիչներ, Էլեկտրախորովածիչներ, Էլեկտրափորձասարքեր (электротостеры), Էլեկտրամանղալներ(электроростеры), վաֆլեկաղապարներ, ճարպաջեռոցներ, բարբեկյուրներ, հացաթխման վառարաններ, Էլեկտրաթավաներ (ракетницы), յոգուրտամաններ (йогуртницы), մուլտիփեններ (мултиварки), Էլեկտրաթավաներ	8509 40 000 0 8509 80 000 0
խառնիչներ, սրճադացներ, խոհանոցային մեքենաներ (կոմբայններ), մսնդային պրոցեսորներ, հյուլամզիչներ, ձիթահանչներ (խնոցիներ), մսաղացներ, բլենդերներ, տրորիչներ, հարիչներ, կարտոֆիլամաքրիչներ, պաղպաղակամաններ (мороженицы), դանակներ, դանակարիչներ (ножеточки), մանրակտրիչներ (шинковки), պատառահատիչներ, հատիկաջարդիչներ	
2) սպիտակեղենների, հագուստների և կոշիկների մշակման (վազքի, արդուկման, չորացման, մաքրման) համար	8450 11 110 0 8450 11 190 0 8450 11 900 0 8450 12 000 0 8450 19 000 0
վազքի մեքենաներ	8421 12 000 0
չորացման թմբկազլաններ, կենտրոնախուսակներ (центрифуги)	8421 19 700 9 8451 21 000 8451 29 000
սպիտակեղենի վազման համար սարքեր	8450 19 000 0
անդրաձայնային սարքեր	8479 89 970 8
արդուկներ, արդուկիչ մեքենաներ, շոգեմաքրիչներ (շոգեարտադրիչներ)	8424 30 900 0 8424 89 000.9 8451 30 8516 40 000 0 8516 79 700 0 8516 79 700 0
սրբիչների և հագուստների Էլեկտրաչորուցիչներ	
3) սենքերի մաքրման և հավաքման համար	8508
փոշեկուլներ (չոր և խոնավ մաքրման)	8509 80 000 0
հատակամաքրիչ	8508
փոշեկուլային համակարգեր	8509 80 000 0
Էլեկտրախոզանակներ	8424 30 900 9
գոլորշային խոզանակներ, հատակի փայտեր	8424 89 000 98509 80 000 0
ջրաներծծումային մաքրող սարքեր	8516 79 700 0 8509 80 000 0 8414 51 000 9
4) սենքերում միկրոկլիմայի պահպանման և կարգավորման համար	8415 10
օդափոխիչներ	8415 81 009 0
օդալավորակիչներ	8415 82 000 9 8415 83 000 9
խոնավարարներ, գոլորշիչներ, չորացուցիչներ	8415 90 000 9 8418 99 8479 89 970 8 8509 80 000 0
օդամաքրիչներ, խոհանոցային օդաքաշիչներ	8414 60 000 8421 39 200 8
կենդանիների բազմացման և բույսերի աճեցման ժամանակ օգտագործվող Էլեկտրատաքացուցիչներ, սենյակային սենքերի ջեռուցման (տաքացման) համար Էլեկտրասարքեր, Էլեկտրառադիատորներ, ջերմաօդափոխիչներ, ջերմափոխանցիչներ	8436 21 000 0 8516 21 000 0 8516 29
Էլեկտրաբուխարիներ	8516 21 000 0 8516 29 500 0 8516 29 910 0 8516 29 990 0

«տաք հատակ» համակարգեր	8516 80
5) սանիտարահիգիենիկ	8516 10
ջրատաքացուցիչներ	3922
ցնցուղային խցեր, զուգարաններ (փոփոխական հոսանքի ցանցին միացման դեպքում լուսավորում, տաքացում)	7324 90 000 0 8516 79 700 0 9019 10 900
բերանի խոռոչի հիգիենայի համար օգտագործվող սարքեր	8509 80 000 0
շոգեբաղնիքների համար էլեկտրաշերմատաքացուցիչ սարքեր (քարիկներ)	8516 29 990 0
միջատների ոչնչացման համար էլեկտրասարքեր	8543 70 900 0
6) մազերի, մատների և մաշկի խնամքի համար	8510 10 000 0 8510 30 000 0
էլեկտրասափրիչներ, տրիմերներ, մազազերծման սարքեր (эпиляторы)	8510 20 000 0 8516 79 700 0
մազերի կտրման համար մեքենաներ	8516 31 000 0
դեմքի համար էլեկտրաշոգեբաղնիք	8516 32 000 0
ֆեներ, ստայլերներ (стайлерны), մազերի հարդարման համար սարքեր, ուղղիչներ	8516 33 000 0 8516 32 000 0
ծեռքերի համար էլեկտրաչորացուցիչներ	
մազերի համար էլեկտրաբիզուտիներ, էլեկտրաաքցաններ	
7) մարմնի ջերմացման համար	6301 10 000 0
ջեռակներ, ծածկոցներ, ներքնակներ և բարձեր	6306 40 000 0 6307 90 990 0 9404 21 9404 29 9404 90
8) թրթռամերսման	9019 10 100 1
մարմնի մերսման համար ապարատներ (առանց բժշկի հսկողության)	
ոտքերի համար ջրամերսումային տաշտակներ	9019 10 900 1
9) խաղային, սպորտային և մարզասարքվածքային սարքավորանքներ	9504 50 000
փոփոխական հոսանքի ցանցին միացված տեսախաղեր և դրանց համար խաղային սարքեր, սպորտային և մարզասարքվածքային սարքավորանքներ	9504 30 9504 90 800 9 9506 91
10) լսա և տեսաապարատներ, հեռա և ռադիոհաղորդման ընդունիչներ	8519 8521 8525 80 8527
լսատեսագրառումային և լսատեսավերարտադրման ապարատներ	8528 49 8528 59 8528 69 8528 72
ռադիոընդունման ապարատներ	8527
հեռուստատեսային ընդունիչներ, հեռատյուններներ (телезюнеры), արբանյակային հեռուստատեսության տյուններներ (тюнеры)	8528 71 8528 72
ձայնային համակարգեր	8518 21 000 0 8518 22 000 9 8518 29
ձայնային հաճախականության ուժեղացուցիչներ	8518 40 8518 50 000 0
11) կարի և հյուսելու	8452 10
էլեկտրաշարժաբերով կարի օվերլոկներ	8452 10 190 0
էլեկտրական հյուսելու սարքեր	8447
12) սնման բլոկներ, լիցքավորման սարքեր, լարման կայունացուցիչներ	
կենցաղային սարքավորանքների համար (կենցաղային էլեկտրասարքավորումներ, կենցաղային	8504 40 300 9 8504 40 820 8504 40 900 8

ռադիոէլեկտրոնային ապարատներ, հեռախոսներ, նավագնացներ, էլեկտրական հաշվիչ մեքենաների սարքավորումներ)	8504 40 550 9
կուտակիչների լիցքավորման համար սարքավորումներ	8433 11 100 0
13 պարտեզաբանջարանոցային տնտեսությունների համար.	8433 19 100 0
զազոնահնձիչներ, տրիմերներ (սիզամարգեր և դալար ցանկապատեր խուզելու համար)	8467 29 300 0
	8467 29 800 0
պատուհանների, դռների, դարպասների (էլեկտրաշարժիչի լրակազմով) համար էլեկտրաշերտափեղկեր	8479 89 970 8
պարտեզային օդափուքեր	8467 29 900 0
օդափոխիչային փոշեծուծներ	8508 60 000 0
կիթի ապարատներ	8434 10 000 0
14 ակվարիումների և պարտեզների ջրավազանների համար.	8414 80 800 9
ճնշակներ	8413 70
պոմպեր	8413 81 000 9
ջեռուցիչներ	8516 10 800 0
լուսավորման սարքվածքներ (լամպեր)	9405 40 100 9
	9405 40 310 9
	8405 40 350 9
	9405 40 390 9
	9405 40 910 9
	9405 40 950 9
	9405 40 990 8
	9405 91 900 9
	9405 92 000 9
	9405 99 000 9
ջրի գոման կամ մաքրման համար սարքվածքներ (էլեկտրական գոիչներ, մանրէազերծիչներ)	8421 21 009 0
էլեկտրական կերատաշտեր	8509 40 000 0
	8413 70
	8413 81 000 9
պարտեզների համար դեկորատիվ շատրվաններ (էլեկտրաշարժիչով, պոմպով)	
15 էլեկտրապոմպեր	8413
խմելու ջրի, ջրամատակարարման, ջրային ջեռուցման, կեղտաջրերի (առանձնատների, մենատների)	
16 լուսային սարքվածքներ և լույսի աղբյուրներ	8539 21 920 0
	8539 21 980 0
	8539 22
	8539 29 920 0
	8539 29 980 0
	8539 31
	8541 40 100 0
էլեկտրական լամպեր (ընդհանուր նշանակության շիկացման, լյումինեսցենտային կոմպակտ, լուսադիոդային)	9405
ընդհանուր նշանակության լուսատուներ	9405 10 210 9
	9405 10 400 9
	9405 10 500 9
	9405 10 910 9
	9405 10 980 9
	9405 20 110 9
	9405 20 400 9
	9405 20 500 9
	9405 20 910 9
	9405 20 990 9

		9405 40 100 9
		9405 40 310 9
		9405 40 350 9
		9405 40 390 9
		9405 40 910 9
		9405 40 950 9
		9405 40 990 8
		9405 40 100 9
		9405 40 310 9
		9405 40 350 9
		9405 40 390 9
		9405 40 910 9
		9405 40 950 9
		9405 40 990 8
	գրուստում խորացված լուսատուներ	
		9405 40 100 9
		9405 40 310 9
		9405 40 350 9
		9405 40 390 9
		9405 40 910 9
		9405 40 950 9
		9405 40 990 8
	լուսարձակներ	9405 40 100 9
	կենցաղային լուսային շարաններ, այդ թվում տոնածառներինը	9405 30 000 0
	17) Էլեկտրատեղակայման արտադրատեսակներ անջատիչներ, այդ թվում կիսահաղորդչայինը, ժամանակակարգավորիչները	8536 50 9107 00 000 0
	Էլեկտրասարքավորումների համար անջատիչներ	8536 50
	վարդակներ	8536 69 900 9
	խրոցակներ	8536 69 900 9
	ճյուղավորիչներ, հարմարակներ	8536 69 900 9 8536 90 100 9 8536 90 850 0
	18) Երկարիչներ	
	գտիչներով երկարիչներ	8544 42
	կոճի վրայի երկարիչներ	8544 42
2.	II. Անհատական Էլեկտրոնային հաշվիչ մեքենաներ (անհատական համակարգիչներ)	
	անհատական Էլեկտրոնային հաշվիչ մեքենաներ, այդ թվում համակարգային բլոկները	8471 30 000 0 8471 41 000 8471 49 000 0
	հաշվիչ ապարատները, այդ թվում հաշվիչ մեքենայի հետ համատեղ աշխատողները	8470 50 000
3.	III. Անհատական Էլեկտրոնային հաշվիչ մեքենաներին միացված ցածր լարման սարքավորումներ	
	1) տպիչներ (պրինտերներ)	8443 32 100 9
	2) սքաներներ	8471 60 700 0
	3) մոնիթորներ, թվային լուսաշրջանակներ	8519 8521 8527 8528 41 000 0 8528 51 000 0 8528 59 800 9
	4) անխափան սևման աղբյուրներ	8504 40 300
	5) ձայնային ակտիվ համակարգեր	8518 21 000 0 8518 22 000 0
	6) մուլտիմեդիային պրոյեկտորներ	8528 61 000 0 8528 69
	7) բազմագործառույթային սարքավորումներ	8443 31
4.	IV. Էլեկտրաֆիկացված գործիքներ (ձեռքի և շարժական Էլեկտրական մեքենաներ)	
	Էլեկտրաֆիկացված գործիքներ (ձեռքի և շարժական Էլեկտրական մեքենաներ)	8467 21 8467 29 300 0 8467 29 900 0
	գայլիկոնիչներ, հորատիչներ, պտուտակադարձիչներ, մանեկապտտիչներ, պտուտակիչներ՝ սղոցներ, նրբասղոցներ	8467 22

	և հղկամեքենաներ, այդ թվում՝ անկյունայինները, ողորկման մեքենաներ	8467 29 300 0 8467 29 510 0 8467 29 530 0 8467 29 590 0 8467 29 700 0
	ռանդաներ	8467 29 100 0 8467 29 300 0
	մկրատներ	8467 29 900 0 8467 29 590 0 8467 29 900 0
	շրջասրոց ֆրեզային մեքենաներ	8467 29 300 0
	ձեռքի կուտակչային գործիքներ (լիցքավորման սարքով)	8465
	անհատական օգտագործման համար փոքրատեղաբաշտակային փայտամշակման հաստոցներ	8424 20 000 0
	անբոցավառելիության հեղուկների ատրճանակ- փոշարարներ	
5.	V. Էլեկտրաերաժշտական գործիքներ	
	Էլեկտրաերաժշտական գործիքներ	9207
6.	VI. Մալուխներ, մետաղալարեր և քուղեր	
	մալուխներ, մետաղալարեր և քուղեր	8544 49 910 8544 49 950 0 8544 49 990 0
7.	VII. Ավտոմատ անջատիչներ, անջատման պաշտպանիչ սարքեր	
	ավտոմատ անջատիչներ, անջատման պաշտպանիչ սարքեր	8535 21 000 0 8535 90 000 0 8536 20 100 8 8536 20 900 0 8536 30
8.	VIII. Էլեկտրական էներգիայի բաշխման համար ապարատներ	
	1) անջատիչներ և ներհատվածքային փոխարկիչներ, ոչ ավտոմատ գատիչներ, անջատիչներ-գատիչներ, փոխարկիչներ-գտիչներ, անջատիչներ և փոխարկիչներ, այդ թվում՝ փաթեթայինները, փաթեթաբռնցքայինները	8535 30 100 0 8535 90 000 0 8536 50 8535 90 000 0 8536 90 100 9
	2) արդյունաբերական նշանակության էլեկտրական միակցիչներ	8535 10 000 0 8536 10
	3) կենցաղային և արդյունաբերական նշանակության ապահովիչներ	8535 90 000 0 8536 90 010 0 8536 90 100 9
	4) պտուտակային և ոչ պտուտակային հպումային սեղմիչներ, սեղմիչների, սեղմակային շրջանակների հավաքածուներ, միակցիչ սարքեր	8535 30 100 0 8535 90 000 0 8536 41 8536 49 000 0
	5) փոփոխական կամ հաստատուն հոսանքի ցանցից կարգավորվող ընդհանուր նշանակության մինչև 1000 Ա հաստատուն և փոփոխական հոսանքի էլեկտրամագնիսական հպարկիչներ	8535 90 000 0 8536 30 8536 50 8537 10 990 0 8537 20 910 0
	6) էլեկտրամագնիսական գործարկիչներ (բացառությամբ ծովային և պայթյունապաշտպան էլեկտրամագնիսական գործարկիչներից)	8537 10
	7) մինչև 1000 Վ լարման լրակազմային սարքեր	8537 10 910 9 8537 10 990 0 8537 20 910 0
	8) բնակելի շենքերի համար լուսավորման վահանակներ, հասարակական շենքերի համար բաշխման վահանակներ, բնակելի և հասարակական շենքերի համար ներանցիչ-	

9.	բաշխիչային սարքեր, արտադրական և հասարակական շենքերի համար լուսավորման վահանակներ	
	IX. Էլեկտրատեխնիկական սարքավորումների կառավարման համար Էլեկտրական ապարատներ	
	Էլեկտրատեխնիկական սարքավորումների կառավարման համար Էլեկտրական ապարատներ.	8535 90 000 0 8536 41 8536 49 000 0
	1) կառավարման և պաշտպանական ռելեներ	8535 8536
	2) Էլեկտրական և Էլեկտրատեխնիկական ապարատներ, Էլեկտրատեխնիկական սարքավորումների կառավարման նպատակների համար հաղորդակցման տարրեր	9032 10
	3) ջերմապաշտպանիչներ	8535 30 100 0 8535 90 000 0 8536 50
	4) ծրագրավորման սարքով անջատիչներ	8537 10 910 9 8512 20 000 9
	5) լուսային ցուցասարքեր	8535 30 100 0
	6) մեխանիկական մոլակային գործառույթով շտապ կանգառումով Էլեկտրական սարքեր	8535 90 000 0 8536 50 8535 30 100 0
	7) ավտոմատ փոխարկման կոմուտացիայի սարքեր	8535 90 000 0 8536 50 8536 90 850 0
	8) կառավարման և պաշտպանական կոմուտացիայի սարքեր	8537 10 990 0 8537 20 910 0 8535 90 000 0 8536 30 8537 10 990 0
	9) իմպուլսային գերլարումներից պաշտպանության սարքավորումներ (գերլարումների սահմանափակիչներ)	8537 20 910 0 8535 40 000 0 8536 30 8535 30 100 0
	10) տարրային կոմուտատորներ, հրահանգային ապարատներ, կոնտրոլերներ, թմբուկային փոխարկիչներ, ձեռնային գործարկիչներ, տարբեր անջատիչներ	8535 90 000 0 8536 50 8537 10 910 0 8537 20 910 0 8535 30 100 0
	11) համապիտանի, փոքրածրաչափային, խաչային, սողանկային (ползунковый) անջատիչներ և փոխարկիչներ, բանալիներ	8535 90 000 0 8536 50 8535 30 100 0 8535 90 000 0 8536 50
	12) դիրքային անջատիչներ և փոխարկիչներ, դիրքային անջատիչների բլոկներ, միկրոանջատիչներ (միկրոփոխարկիչներ)	8535 30 100 0 8535 90 000 0 8536 50
	13) կառավարման սեղմակոճակներ, սեղմակոճակային կառավարման կետեր, կայաններ, ապարատներ	8537 10 990 0 8537 20 910 0 8537 10 910 9 8537 20 910 0 9032 89 000 9
	14) ինքնավար աշխատող կենցաղային Էլեկտրական սարքերի կառավարման ավտոմատ սարքեր	8535 30 100 0 8535 90 000 0 8536 50
	15) Էլեկտրական սարքերի համար անջատիչներ և փոխարկիչներ	